Արձանագրություն թիվ 2

Նիստը կայացել է 2026թ. հունվարի 7-ին:

Նիստին մասնակցում էին խորհրդի բոլոր անդամները:

Խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցում էին «Գյումրու № 28 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենը, «Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գյումրու թիվ 18 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գյումրու Վազգեն Ա-ի անվան թիվ 27 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեններն ու վարչատնտեսական մասի համակարգողները:

Օրակարգում՝

1. Կառավարման միասնական խորհրդի թիվ 2 նիստի օրակարգի հաստատման մասին (հաղորդող՝ Գ. Ավետիսյան)
2. Նախորդ (թիվ 1) նիստի որոշումների կատարման մասին (հաղորդող՝ Գ. Ավետիսյան)
3. «Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գյումրու թիվ 18 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գյումրու Վազգեն Ա-ի անվան թիվ 27 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գյումրու № 28 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆինանսատնտեսական գործունեության (տարեկան) հաշվետվության քննարկման մասին 01.01.2025-01.01.2026թթ. ժամանակահատվածի համար (հաղորդող՝ վարչատնտես. համակարգողներ, «Գյումրու № 28 հիմնական դպրոց» -ի տնօրեն)
4. Ուսումնադաստիարակչական աշխատանքների քննարկման մասին (հաղորդող՝ տնօրեններ)
5. ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու №28 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2025-2026 ուստարվա 2-րդ կիսամյակի 01.01.2026թ. դրությամբ տարիֆիկացիոն ցուցակի (աշխատավարձերի հաշվառման մատյան) և հաստիքային ցուցակի քննարկման, ուսումնական հաստատության կազմակերպական կառուցվածքի մասին (հաղորդող՝ Մ. Առաքելյան)
6. ՊՈԱԿ-ների «Ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կարգ»-ի հաստատման մասին: (հաղորդող՝ տնօրեններ)
7. ՊՈԱ Կ-ներում 2025-2026 ուստարվա ընթացքում ՀՀ ԿԳՄՄՆ «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացրած արտաքին ընթացիկ գնահատման արդյունքների մասին: (հաղորդող՝ տնօրեններ):
8. Այլ հարցեր:

Լսեցին 1՝

Կառավարման միասնական խորհրդի թիվ 2 նիստի օրակարգի հաստատման մասին: (հաղորդող՝ Գ. Ավետիսյան)

Որոշեցին՝

Հաստատել միասնական խորհրդի 07.01.2026թ թիվ 2 նիստի օրակարգը:

Լսեցին 2՝

Նախորդ (թիվ 1) նիստի որոշումների կատարման մասին:

(հաղորդող՝ Գ. Ավետիսյան)

Որոշեցին՝

Հավանություն տալ նախորդ (թիվ 1) նիստի որոշումների կատարողականին, այն գնահատել բավարար և հաստատել:

Լսեցին 3՝

Ներկայացվեց «Գյումրու թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գյումրու թիվ 18 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գյումրու Վազեն Ա-ի անվան թիվ 27 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի, «Գյումրու № 28 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ֆինանսատնտեսական գործունեության (տարեկան) հաշվետվությունը 01.01.2025-01.01.2026թթ. ժամանակահատվածի համար, ՊՈԱԿ-ների տնօրենները ներկայացրին նաև 01.01.2026թ. դրությամբ դասարանների և աշակերտների թիվը, ԿԱՊԿՈՒ սովորողների կազմը (թիվը) և մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություն իրականացնողների թիվը, նախակրթարանի խմբերի և սաների թիվը, աշխատողների թիվը, դասաժամերի քանակը: Նշվեց, որ տվյալները մուտքագրվելու են «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգ» ըստ օրենսդրական պահանջների հետագա աշխատանքները ճիշտ կազմակերպելու համար:

Լսելով տնօրենների և վարչատնտեսական մասի համակարգողների հաղորդումը՝

Որոշեցին՝

Հավանություն տալ 01.01.2025-01.01.2026թթ. ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվությանը և ներկայացնել ՀՀ Շիրակի մարզպետարան:

Լսեցին 4՝

Ուսումնադաստիարակչական աշխատանքների քննարկման մասին (հաղորդող՝ տնօրեններ)

«Գյումրու թիվ 18 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Լ. Հարությունյանը և «Գյումրու Վազգեն Ա-ի անվան թիվ 27 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար Մ. Մելքոնյանը ներկայացրին իրականացված ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվությունը:

Որոշեցին՝

Տնօրենների հաղորդումն ընդունել ի գիտություն:

Լսեցին 5՝

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու №28 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2025-2026 ուստարվա 2-րդ կիսամյակի 01.01.2026թ. դրությամբ տարիֆիկացիոն ցուցակի (աշխատավարձերի հաշվառման մատյան) և հաստիքային ցուցակի քննարկման, ուսումնական հաստատության կազմակերպական կառուցվածքի մասին:

Քանի որ միասնական խորհրդում ընդգրկված դպրոցներից միայն »Գյումրու թիվ 28 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը դեռ չի անցել կառավարման նոր համակարգի, ուստի քննարկման ներկայացվեց 2025-2026 ուստարվա 2-րդ կիսամյակի 01.01.2026թ. դրությամբ տարիֆիկացիոն ցուցակը (աշխատավարձերի հաշվառման մատյան) և հաստիքային ցուցակը, ներկայացվեց նաև հաստատության կազմակերպական կառուցվածքը:

Որոշեցին՝

1. Հավանություն տալ 2025-2026 ուստարվա 2-րդ կիսամյակի հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակներին:

2. Խորհրդի որոշումը, սահմանված կարգի համաձայն, ներկայացնել տարածքային կառավարման մարմին (ՀՀ Շիրակի մարզպետարան):

3. Հաստատել ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու №28 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կազմակերպական կառուցվածքը:

Լսեցին 6՝

ՊՈԱԿ-ների «Ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կարգ»-ը հաստատելու մասին: (հաղորդող՝ տնօրեններ)

Որոշեցին՝

Հիմք ընդունելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 17.12.2025թ 81-Ն հրամանը՝ հաստատել ՊՈԱԿ-ների ուսուցչի թափուր տեղի համար մրցույթ անցկացնելու մասին տնօրենի կողմից ներկայացված կարգը:

Լսեցին 7՝

ՊՈԱԿ-ներում 2025-2026 ուստարվա ընթացքում ՀՀ ԿԳՄՍՆ «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացրած արտաքին ընթացիկ գնահատման արդյունքների մասին: (հաղորդող՝ տնօրեններ):

Որոշեցին՝

ՀՀ ԿԳՄՍՆ «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացրած արտաքին ընթացիկ գնահատման արդյունքները համարել բավարար:

Միասնական խորհրդի նախագահ՝ Գ. Ավետիսյան

Քարտուղար՝ Թ. Մկրտչյան

Անդամներ՝ Արմինե Մկոյան

Ռուզաննա Շահվալադյան

Աիդա Նալբանդյան

Էմմա Գրիգորյան

Քնարիկ Հարությունյան

Գայանե Մուրադյան

Լիլիթ Մաթևոսյան

Մանե Կարապետյան

Լիլիթ Սիմոնյան